

Նմանցընէ քերթողը մշակաց այն խըն՝ դութեանն՝ որ կ'ունենան. երբոր յետ երկարատև ցամաքութեան մը, որ իրենց հունձքը փճացընելու կը սպառնայ, լերան մը գագաթէն կը տեսնեն որ ծիրանի գօտին ծովուն մէջէն վեր կը բարձրանայ, և երկինքն ալ անոր ակնարկութեանն հպատակելով՝ անձքեաթեր ամպերով կը ծածկուի.

« Զայսօրինակ հրճուէին որդիք Տրոյայ՝ յորմունսն հայրենականս տեսանելով զահաւորն Պենթեսիլէ զծարաւին պատերազմաց. զի յոյս բարեաց՝ ի մարդոյ սիրտ սողոսկեալ, զծանրութիւն աղիտիցն բառնայ: Սովաւ դոյզն ինչ ջեռանէր և սիրտ վշտահարն Պրիամու՝ բեկեալն՝ ի սպառ: Որպէս որ որ ընդ երկար հարեալ աչաց կուրութեամբ, նուիրականին լուսոյ և կամ մահու անձկայրեաց՝ հանճարեղ ապա ճարտարութեամբ բժշկի կամ զից ուրուք չնորհիւ շամանդղոն յականողեաց նորա փարատեալ, յարշալուսոյ պայծառութիւն անդրէն հայիցի՝ ոչ որպէս երբեմն. — թէպէտ զերծ՝ ի չարեացն կենդանութիւն իմն զզայ յանձին, այլ հետք խօթութեանն անմեկին են յարտեանանց նորա. այսպէս և որդին Լաւոմեղոնի տեսանէր զզալուստ ահաւորն Պենթեսիլեայ. խնդայր սակաւ մի, այլ գառնանայր և ևս յիշատակաւ որդոցն կորուսելոց»:

« Եռերունւոյն այս տիսրախառն ուրախութիւնը սրտաշարժ է, և կուրին նըմանութիւնն ալ տեղոյն յարմար: Աֆսոն որ Լուինտոսի նմանութիւնները խիստ յաճախ են և քովիչ քովլ բարդած. անսանկ որ կրնայ ըստուիլ իրեն համար՝ թէ քան զնոմերուն իսկ աւելի հոմերական է. ասիկայ աշակերտաց և հետեղներու յատուկ բնութիւնն է: Արիանգամայն այս նմանութիւններն երկայն են, և երբեմն զուրկ՝ ի ճշգութենէ: Բայց այս բանս մասսամբ գըրչաց յանցանքն ալ կ'երեայ, որովհետեւ շատ խանգարած են բնագիրը: Այսուամենայնիւ Լուինտոսի զլիաւոր գեղեցիութիւններէն մէկն ալ իր նմանութիւններն են, որոնց աւելի ընդհանուր առմամբ նայելու է՝ քան թէ մանրամասնաթար քնննելով:

Իր շարունակուի:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Դիւրեն:

Հենրիկոս տը լա 'Դուր տ' (Պվերներ, գերակոմս Դիւրէնի, 1611 տարւոյն սեպտեմբերի 11 ն ծնաւ ՚ի Ակտան, երկրորդ որդի Պուլեօնի դքսին: Պղտիկուց զինուորութեան սեր մը երևեցուց վրան. տասը տարեկան եղած միջոցը մէկէն մէկալէն լաւով՝ որ պատերազմական աշխատութեանց էր կը ընար դիմանալ իր տկար կազմուածքը, գնաց ձմեռ ատեն ամբողջ գիշեր մը Ակտանի պարսպին վրայ անցուց, ու առաւօտը թնդանօթի մը սայլին վրայ քնացած գտան զինքը: Իր պատերազմասէր եռանդն աւելի գրգուեցաւ՝ մեծամեծ զօրավարաց վարքերը կարդալով. մասնաւորապէս Լցեքսանզրի քանութիւնները գրաւած էին իր միտքը, և անյագ ախորժով կը կարդար զլուին տոս Լուրտիոս: Ծանողքը իր քեռւոյն՝ Կասաւի Աւրիտիոս իշխանին քովը խրկեցին զինքը, որ ժամանակին անուանի զօրավարներէն մէկն էր, որպէս զի պատերազմական արուեստը սորվի անկէց: Յետոյ վաշտի մը հրամանատարութիւնը տրուեցաւ իրեն, որով առաջին անգամ ալ աթի պատերազմին մէջ մտաւ: Տը լա Փօրս մարածախոր, որ պաշարման զօրապետն էր, հրաման տուաւ իր որդուոյն այն մարտկոցն առնելու, որով քաղաքն ապահովապէս իրենց ձեռքը պիտի իյնար. Երբոր անիկայ չկրցաւ յաջողցընել, Դիւրէն տեղն անցաւ ու հանճարեղ յարձակմամբ մը տիրեց անոր:

Այս քաջութենէն ետքը՝ ուրիշ շատ պատերազմներու մէջ հանգիսացաւ, ինչպէս Սօլիի գզեկին և Պրիզահ քաղաքին առմանը, և Դաւուինի պաշարման միջոցը: Ակտ կոտորած տուաւ թշնամեաց՝ ի Անգալիկէ՝ երբոր քաղքին վրայ կը յարձակեր իր զօրքը. բայց

յանկարծակի վիրաւորուելով ամենէն
էական վայրկենին, բռնադատուեցաւ
ետքաշուելու : Խոյնակս իր քաջութեա-
նը նշաններ թողուց ՚ի Ուուսիլեօն 1642
տարւոյն, և Ուտայիա՝ 1643 տարւոյն :

Հետ տասնըեօթը տարի այլ և այլ
զօրավարներու ձեռքին տակ ծառայե-
լու, 1644 տարւոյն մարտախստութեան
գաւազանն ընդունեցաւ : Իս առթիւ
Գերմանիոյ բանակին հրամանատա-
րութիւնն իրեն յանձնուեցաւ, որ ըզ-
գեստուց և ձիերու պէտք ունէր : Դիւ-
րէն ամէն պիտոյք հոգալէն ետքը,
7,000 հոգւով Հռենոսն անցաւ, յաղ-
թեց Ուկրաի զօրավարին եղբօրը, և
Լանկիէնի դքսին կողմը բռնեց, որ յե-
տոյ Ուեծն Պանտէ կոչուեցաւ : 1645ին,
Ուարիէնտալի պատերազմին մէջ չկըր-
ցաւ զէմզնել թշնամեաց . բայց իրեք
ամիս ետքը՝ Նորթլինկի պատերազմին
մէջ վրէժը հանեց : Կոյն տարին հա-
տատեց նաև Պարէվի կայսրընտիրն իր
իշխանութեան մէջ . Հետեւալ տարին
հոչակաւոր եղաւ իր անուանն համար,
որովհետեւ 140 փարասխ տեղ քիչ ժա-
մանակի մէջ քալեցընելով իր զօրքը՝
գաղղիական բանակը միացուց Շուե-
տաց բանակին հետ, որուն հրամանա-
տարն էր Արանկէլ զօրապետը, և այն-
չափ նեղը խոթեց Պաւիերայի դուքսն՝
որ խաղաղութիւն խնդրեց :

Երբոր այս իշխանը Պաղղիոյ հետ
դրած դաշանցը գէմգործեց , Ղիւրէն
մեծ յաղթութիւն մը կանգնեց անոր
վրայ 'ի Չումարթաւզէն , և 1648ին
վոնտեց զան բոլորովին իր իշխանու-
թեան երկրէն : Ի՞ն ատեն քաղաքական
պատերազմբացուեցաւ Պաղղիոյ մէջ .
Պուլեօնի դուքսը կ'ուզէր որ Ղիւրէն
խորհրդարանին կողմը բռնէ . բայց ա-
նիկայ ալ չուզենալով իր թագաւորին
գէմ պատերազմիլ . Հողանտա գնաց ,
և երբոր դարձաւ անկից հաստատ միտ
քը դրած էր արքունեաց թիկունք ըլ-
լալու : Բայց Ուազարէն Պերմանիոյ
բանակին հրամանատարութիւնը ցտա-
լով իրէն , Ղիւրէն ալ զայրացած իշ-
խանաց կողմը բռնեց , և քիչ մնաց որ

Ա էնսամի բանտէն հանէր զանոնք :
Ե բքունական կողմնակցութիւնը Տիւ-
բէսի-Իշրազէն մարածախտը ասպա-
րէզ հանեց, որ մէկ անգամ մըյաղթա-
նակեց Դիւրէնի՛ ի 1650 Առէդէլի մօտ :

ինէպէտ յաղթուեցաւ ՚Իշւրէն այս
պատերազմիս մէջ, բայց Ապանիացիք
այնչափ մեծ համարմունք ստացած էին
վրան, որ հարիւր հազար սկուտ խրկե-
ցին իրեն՝ յուսալով որ իշխանները կ'ա-
զատէ . սակայն ՚Իշւրէն ետ խաւրեց
այն դրամը, որովհետև աղկ'ուզէր հաշ-
տուիլ արքունեաց հետ, ինչպէս որ ի-
րօք ըրաւ 1654 ին:

Արքունական բանակին զօրավարութիւնն իրեն յանձնուելով, թող չտուաւ Գյոնտէի զօրաց որ Առւառ գետն անցնին Աւրծոյի կամրջին վրայ, և խել մը տեղ հալածեց զանոնք : Գյոնտէ իշխանը ջանաց պաշարել արքունական բանակն 'ի Ահնեօլ-Ահն-Այօրժ' ընդ մէջ Ակյն և Արանը գետոց . բայց Դիմուրէն ձարտարութեամբ թող ըստուաւ : 1654 և 55 տարիներուն առաւ զյոնտէ, Ահն-Ակուիլեէն և ուրիշ շատ քաղաքներ : 1657ին՝ Ահն-Ա ընանի և Արտիք բերդին տիրեց Դրսմուելի Անգղիոյ պաշտպանին հետ մէկտեղ : Յետոյ յանձնուեցաւ իրեն երկու ազգաց զօրքերովը Տէօնքէրք քաղաքը պաշարել : Դիմուրէն խորտակեց Ապանիացւոց զօրութիւնը Տիւն ըստուած աւազակոյտ տեղը, և անմիջապէս վերջը յաղթական պատերազմաւ մտաւ 'ի Տէօնքէրք : Ի յսպիսի փառաւոր յաղթութենէ մը ետքը, Դիմուրէն հետեւեալ տողերով ծանոյց իր ամուսնոյն ըրած քաջութիւնը . " Ձիշնամիք մեզի ընդ աւաջ եկան, և գոհութիւն Իստուծոյ՝ յաղթուեցան : Ի յսօր բաւական յոգնած եմ, անոր համար բարի գիշեր կը մաղթեմ քեզի, ու հանգելու կ'երթամ . :

•Բ.իշ ատենէն Ուտընարտի , Խւբը
և զրեթէ բոլոր Վխանտրայի տիրեց .
և այս յաղթութիւնները պատճառ է .
զան Պիւրենեանց խաղաղութեանն ընդ
մէջ Սպանիոյ և Ղաղղիոյ՝ 1659 տա-

րւոյն : Այս երկու տէրութեանց թագաւորներն իրարու հետ տեսնուեցան Փասիանաց կղզւոյն մէջ, և իրենց արքունեաց նշանաւոր անձինքն իրարու ներկայացուցին : Դիմուրէն իր սովորական ամօթխած բնութեամբը չէր ուղեր երեսնալ. բայց Փիլիպպոս Բ Ապանիոյ թագաւորը կանչել տուաւ զինքը, և ուշադրութեամբ մը վրան նայելէն ետքը՝ դարձաւ իր քրոջն ու ըստ . “ Այս մարդը շատ գիշերներ անքուն անցընել տուաւ ինձի ” :

Երբոր 1667^{ին} պատերազմը նորէն սկսաւ, լուգովիկոս Ժ.Դ՝ որ բոլոր գաղղիական բանակաց ընդհանուր մարածախտ անուաներ էր զ’ Դիմուրէն, իրեն յանձնեց զօրապետութիւնը : Այնչափ քաղաքներ նուածեց Դիմուրէն ’ի Ֆլանտրա, որ հետեւեալ տարին Ապանիացիք բռնադատուեցան հաշտութիւն խնդրելու : Այս միջոցին էր որ Դիմուրէն կալվինականութիւնը թողլով՝ ուղղափառ եկեղեցւոյ մէջ մտաւ :

Լուգովիկոս Ժ.Դ Հոլանտայի դէմ ալ պատերազմ հրատարակելով, դարձեալ զ’ Դիմուրէն ընտրեց ’ի զօրագլուխ : Քանանուերկու օրուան մէջ քառասուն քաղաք առին Պաղղիացիք Հոլանտացւոց ձեռքէն : Երկրորդ տարին՝ ինչուան Պետրին հալածեց Դիմուրէն Պլանտէպուրկի կայսրընտիրը, որ Հոլանտացւոց օգնութեան եկած էր : Այս իշխանը թէպէտյաղթուած՝ այնպիսի սէր ձգեց Դիմուրէնի վրայ, որ իմանալով թէ իր զօրքէն մէկը Դիմուրէնի բանակն անցեր էր զանիկայ թունաւորելու համար, մէկէն իմաց տուաւ գաղղիացի զօրավարին : Երբոր գտնուեցաւ յանցաւորը, Դիմուրէնի տուած պատիժն այս եղաւ՝ որ վոնտեց զան բանակէն : Եր վեհանձն բնաւորութիւնը շատ ուրիշ առիթներու մէջ ալ ցուցուց . ինչպէս՝ երբոր մեծ քաղքի մը բնակիչքը հարիւր հազար սկուտ կ’ուզէին ընծայել իրէն՝ որպէս զի իրենց երկրէն չանցնի, պատասխան տուաւ՝ թէ որովհետեւ առիթներու միտքը դրած չէր հոնտեղէն անցընելու իր բանակը, անոր համար չէր

կրնար առնել անոնց նուերը :

Երբոր Լուգովիկոս նուածեց ըզ-ֆրանշ-Դանդէ, Դաերմանսիոյ կայսերութեան մէջ աչաւոր դաշնակցութիւն դէմ: Դիմուրէն, որ Ալսակիոյ մէջ էր, որպէս զի թող չտայ որ թշնամիք իրենց զօրութիւնները միացընեն՝ տասը հազար հոգով Հունուսն անցաւ, չորս օրուան մէջ 30 փարսախ տեղ քալեց, ջարդեց Դաերմանացիներն ’ի Անցայմ, որոնց հրամանատարներն էին լուէնի դուքսն ու Պաբրարա, և Այն գետէն անդին հալածեց :

Ծնէպէտ Դիմուրէն սովորութիւն ունէր միշտ անձամբ բանակին մէջ մտնալու ու զինուորաց պիտոյքն հոգալու, բայց ևս առաւել վերոյիշեալ բազմավատակ պատերազմէն ետքը, որովհետեւ ծանր հիւանդութիւն ինկեր էր զօրաց մէջ: Դրամոց քսակը ձեռքը՝ մէյ մը ասդիս մէյ մը անդին կը վազէր ու կը խրախուսէր զամէնքը հայրական խօսքերով: Երբոր ձեռքի ստակը կը լմբնար, դիմացն հանդիպած պաշտօնակալներէն փոխ կ’առնէր, և իր հոգաբարձուին կը խրկէր զանոնք՝ որ ըստակնին վճարուի :

Ինյաց սակայն խոստովանելու է որ այս յետին պատերազմները՝ մէկ կողմանէ այնչափ պատիւ ըլրին Դիմուրէնի, որովհետեւ այնպիսի անգիտութիւններ գործեցին Պաղղիացիք Պալատինեան նահանգին մէջ, որ պատմութեան մէջ քիչ անգամ նմանը կը հանդիպի . թէպէտ բարձրագոյն հրամանէ ստիպեալ էր Դիմուրէն քանդելու աւերելու այն երկիրը : Պալատին կայսրընտիրը իր Անհայմի դղեկին ծայրէն երկու քաղաք ու քսանը հինգ գեղ կրակի մէջ տեսնելով, յուսահատութիւնը սրտին վրայ պատեց, և նախատալից նամակով մը մենամարտութեն հրաւիրեց զ’ Դիմուրէն : Ինյաց Լուգովիկոս Ժ.Դ թող ըստուաւ գաղղիացի մարածախտին՝ ընդունելու անոր հրաւերը :

Անցայմի պատերազմէն ետքը՝ գերմանական բանակին մէջ բազմութիւն

նոր զօրաց գալով, Հռենոսն անցան, ու Ալակիոյ մէջ ձմերեցին : Դիւրէն, որ լուկն քաշուած էր, յանկարծակի դեկտեմբեր ամսուն մէջ լոժ լեռներէն Ալակիա անցաւ . յաղթեց Դիւրմանացւոց 'ի Արևոպէն, և քանի մը օրէն վերջը՝ 'ի Դառըքհայր, և 1675^ր յունուարի 6^ն ստիպեց զանոնք Հռենոսը նորէն անցնելու : Այս անակնունելի դիպուածը շատ զարմացուց զբոլոր Խըրոպա, մանաւանդ երբոր իմացուեցաւ որ Դիւրէն նախանձոտն լովուայի հրամաններուն դէմ 'ի գլուխ տարեր էր այս մեծ գործը : Այն ատեն լի եննայի խորհրդարանը Դիւրէնի արժանաւոր ախոյեան մը հանեց Դաղղիացւոց առջեւ, զանուանին Անդէգուգուլի : Խըրոր այս երկու զօրագլուխները կը պատրաստուէին իրենց քաջութիւնը ցուցընելու Ալացպահ գեղին քովերը, Դիւրէն մարտկոց մը հաստատելու զացած ժամանակը՝ թնդանօթի մը հարուածով մեռաւ, 1675^ր յուլիսի 27^ր, վաթսունըորս տարուան : Բածաւոր Ճերմակ ձիու մը վրայ չեծած էր Դիւրէն՝ երբոր մահաբեր գնտակն եկաւ իրէն : Այսպիսի ձախող դիպուած մը տեսնելով գաղղիացի զօրավարք, սկսան ետ դարձնել զօրքը : Այս նահանջը անանկ զայրացուց հին վինուորներն, որ կ'աղաղակին . Դիւրէնի ձին միայն բանակին առջեւ դրէք, անիկայ զմեզ յաղթութեան կը տանի : Դիւրէնի մարմինն 'ի լու Դիւրնեսիոս թաղուեցաւ՝ թագաւորաց գերեզմաններուն մէջ . բայց 1806 տարւոյն Անկարող զինուորաց եկեղեցին փոխադրուեցաւ :

Արջակ էր հասակաւ Դիւրէն, և դէմքէն նշանաւոր մարդ մը չէր երեար : Օսւարթ էր բնութեամբ, համբերող, քաղցր, և ոչ երբէք ծանր խօսք մը բերնէն ելած է ու և իցէ առթի մէջ : Պատերազմի մէջ հանդիպած ձախորդութիւններուն ոչ երբէք իր պաշտօնականները պատճառ կը դնէր, մանաւանդ թէ միիթարական խօսքերով կը քաջալէրէր զանոնք : Այսելութիւնն ան-

ծանօթ էր իրեն, ընդ հակառակն հաստատուն էր բարեկամութեան մէջ : Արջտ կը ջանար ըրած բարեգործութիւնները ծածկելու . ինչպէս հետեւալ դիպուածէն ալ կ'երևայ : Պաշտօնակալ մը պատերազմի մը մէջ երկու ձի կորսնցուցած ըլլալով՝ չէր գիտեր ինչ ընելիքը, որովհետեւ այնպիսի վիճակի մէջ էր՝ որ չէր կրնար անոնց տեղուրիշ երկու ձի գնել : Դիւրէն երբոր իմացաւ այս բանս՝ իր ձիերէն երկու հատ պարզեց անոր, բայց ամենայն խստիւ ապսարելով՝ որ մարդու մը բան չըսէ . Այս թէ ոչ, ըստ, ամէնքն ալ կու գան ուղելու, ես ալ ամենուն տալու չափ ձի չունիմ . Պատերազմական արուեստին մէջ թէպէտ երբեմն սխալմունքներ ըրաւ, ինչպէս տեսանք, բայց այնպիսի բազմաթիւ մեծ գործերով ալ փայլեցաւ, որ նոյն ժամանակուան առաջին զօրավարը սեպուեցաւ : Դաղղիացիք շատ մեծ համարմունք ու սէր ունէին Դիւրէնի վըրայ, ինչպէս որ հետեւալ երկու գեղեցիկ գովեստներուն մէջ կ'երևայ, զոր հայրէնեաց բերնէն երկու պերճախոս քարողիներ իբրև սիրոյ և մեծ արանաց վերջին ողջոյն մը այն նշանաւոր գերեզմանին վրայ հնչեցուցին :

Մահ Դիւրէնի :

Դառժեաց բօթս այս դաւնազէտ ընդ Դաղղիա համօրէն, որպէս զմէգ թանձրախիտ որ զլսյս երկնից ծածկիցէ, և ելից զամենայն սիրտ խաւարաւ մահու՝ յարհաւիրս և յերկունս կալեալ զամենեսին : Անդ լուր մահուն Դիւրէնի, այր ամենայն թուէր իմն տեսանել զսպառապուռ բեկումն արքայական բանակին, զսահմանս մեր տանակոխ, և կազմ զթշնամիս մխիլ 'ի սիրտ Պիետութեանս : Խսկ ապա մոռացեալ զօդուտ հասարակաց, զմահ մեծի առնն աշխարհին ամեննեքեան . և ընդ աղետալին արկած բերանք կոծեցան և աջք հարան յարտասուս : Այնայն ոք փառս

անձին համարէր զիտել ինչ և խօսիլ զկենայն և զառաքինութեանց . զՃրի սիրելութենէն առ ամենեսին ասէր ոք , այլ ոմն՝ եթէ հիանային ընդ նա բընաւք աննախանձ , և միւսն՝ թէ սարսէին յերեսաց նորա և թշնամիքն անգամառանց իրիք ատելութեան : Այլ մորմոք արքային ընդ մահ նորա և գովարանութիւնն՝ ի փառս հոյակապ մահացելոյն՝ մեծ ևս են և շքեղագոյն դրուատիք առաքինութեանց նորա : Իցաւ արքային իւրոյ և զիւրն յաւել ժողովութիւնն . ընդ քաղաքան՝ ուստի էանց մարմին նորա՝ զնոյն կիրա էր տեսանել , որ ինչ երբեմն՝ ի պետութեանն չուվմայ , յածել յերկրէն Ասորոց՝ ի շիրիմ կայսերաց զամիւնս Վարմանիկեայ : Ազիսեալ կային տունք , տիսուր և մութ լուսութիւն՝ որ զրաւեալն էր զհրապարակս , ի հեծութիւնս ևեթքաղաքացեացն բեկանէր . աւագանին սգաղճեացյօժարակամք էին զդագաղմն արկեալ զուսովք՝ տանել քաղաքէ՝ ի քաղաք . քահանայք և միանձունք վառեալք՝ ի նախանձ , զարտասուս իւրեանց և զաղօթս ուղեկից նմա տային . և քաղաքք , առ որս նոր էր տեսարանն դժնդակ , ի բռնագոյն ցաւս լուծանէին քան զուղեկցացն , և իբրու այն եթէ՝ ի տես զագաղացն կրկին զնա կորուսանել , անդրէն ի կոծ և յարտասուս հատանէին :

ՄԱՍԴԱՐՈՒ

ԱԵՌԱՆԻ ԿՎԻՐԷՆ . աղմկեցաւ ամենայն . գեղեցեցաւ բաղդն . լքաւ յաղթութիւն . բարձաւ խաղաղութիւն . թուլացան դաշնակցաց խորհուրդք առաքինի . ի ցաւոց խորտակեցաւ արութիւն վաշտուց , և 'ի վրիժուց զօրացաւ . անշարժ կայ ձամբարն համօրէն . ընդ կորուստն խոկան վիրաւորք , ոյր եղեն պատճառ , և ոչ զընկալեալ վիրացն : Հարք կիսամահք փութացուցանեն զորդեակսն յաշխարանս մահազրաւ սպարապետին իւրեանց : Բանակն ի կոծ , պաշտէ նմին զմահուն վերջին

պաշտօն , և համբաւ՝ որ սիրէն սփռել ընդ տիեզերս զանցս նորանշան , սրացաւ ելից զիւրոտիք պանծալի վարուք իշխանիս և 'ի մահուն ողորմ կսկիծ :

Բանի հառաջանք անդէն , քանիօն արտասուք , որչափ գովութիւնք հնչեն ընդ քաղաքս և ընդ շենս : Տեսեալ ուրուք զարտորիէիցն աձել , օրհնէ զյիշատակ առնն , յորմէ հնձոցն ակնկալութիւն . և այլ ոք որ դեռ ևս յանդորրու վայելէր զհայրենին ժառանգութիւն , մաղթէ նմին զյաւիտէնիցն հանգիստ , որ փրկեաց զնս՝ ի շփոթից և յանգթութեանց մարտին . աստ զանմահականն մատուցանեն զպատարագ վասն հոգւոյ նորա , որ ոչ անխայեաց առ օգտի հասարակայ յարիւն իւր և 'ի կեանս . և այլուր կանգնեն նմին շքեղ դամբարան՝ ի տեղւո՞ւ ուր ակն ունէին ամբառնալ նմա զյաղթականն . այր այր ընտրէ անձին մասն փառաւոր 'ի չքնաղ վարուց նորա յառնուլ 'ի զրուատիս , և իւրաքանչիւր հատկեալ 'ի հառաջանց իւր և յարտասուաց , հիանայ ընդ անցեալն , ողբայ զառաջակայն և ընդ դալցուն գողայ : Այսպէս արքայութիւնն համօրէն յողքս համակեալ ընդ մահ պաշտպանին իւրոյ , և մահ առն միոյ ևեթ հասարակաց եղեն աղէտք :

ՖԼԵՇԻՒ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանոս գևար :

Հոենոս գետին ակունքը Ալպեան լեռներուն մէջ է , որ 'ի սկզբան իրեք այլ և այլ ձիւղերէ կը բաղկանայ . ասոնք վերջէն կու գան կը միանան իրարու հետ ու կը կազմեն զհռենոս , որ իր մեծութեանն ու ահեղ տեսքին համար Աւրոպայի գլխաւոր գետերէն մէկը կը համարուի : Հոենոսի քովերէն կը բզիսեն նմանապէս Հռոդանոս , Դիցինոյ , Ասպաւ և Ասր գետերն ալ : Այս վերի յիշած իրեք ձիւղերէն